կայացել և այն քննվել է գրավոր ընթացակարգով, Դատարանը գտնում է, որ Պատասխանողից հօգուտ Հայցվորների պետք է բռնագանձել 150.000 ՀՀ դրամ, որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

<<ԻՎԱ ՇԻՆ>> ՍՊԸ-ի և <<Ս-Ֆ <<ԻՎԱ>> ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղ ԱՍ-ի հայցն ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանի՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի ղեկավարի 20.09.2023թ. որոշումը՝ հայցվորներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ոչ իրավաչափ և անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

Ոչ իրավաչափ և անավաեր ճանաչել ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի ղեկավարի 20.09.2023թ. որոշումը:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանից հօգուտ <<ԻՎԱ ՇԻՆ>> ՍՊԸ-ի և <<Ս-Ֆ <<ԻՎԱ>> ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղ ԱՍ-ի բռնագանձել 50.000 ՀՀ դրամ, որպես նախապես վճարված պետական տուրքի գումար և 150.000 ՀՀ դրամ, որպես՝ փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**